Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԵԼԼԻ ԶԱՎԵՆԻ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Լ.Թ.Ասատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ա.Օ.Թոփուզյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա.Գ.Աջամօղլյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովի.Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. դեկտեմբերի 4-ին ժամը 12-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. նոյեմբերի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ. ՍՎԱՋՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Արդի ժամանակաշրջանում, երբ կրթության նկատմամբ նոր մոտեցումներ են ձևավորվում, էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի արդիականացումը գերակա խնդիր է դառնում բոլոր երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականության մեջ: Հասարակության զարգացման ժամանակակից պայմաններում բացառիկ կարևորություն են ձեռք բերում «մարդ-կենսոլորտ» գոյապահպանական փոխհարաբերության գիտակցումը և էկոլոգիական կրթության հայեցակարգի մշակումը՝ որպես ոչ միայն սոցիալ-էկոլոգիական, տնտեսական, այլև էկոբարոյական հիմնախնդիր:

Բնության, շրջապատի նկատմամբ մարդու վերաբերմունքը մեծապես որոշվում է անձի էկոլոգիական մշակույթի, էկոլոգիական կոմպետենտության, էկոլոգիական արժեքների ձևավորվածության մակարդակով: Նման մոտեցումը ենթադրում է մարդու գործունեության նպատակի, կողմնորոշումների շրջադարձային փոփոխում, ոչ միայն կրթության բովանդակության, այլև մարդու կենսակերպի էկոլոգիականացում:

Անձի էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնախնդիրները միշտ էլ գտնվել են մանկավարժների, հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այդ հիմնախնդիրները հետազոտվել են ինչպես արտերկրի, այնպես էլ հայ գիտնականների կողմից:

Էկոլոգիական կրթության վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, մեթոդական տեսանկյունները դիտարկվել են Ի.Դ. Զվերևի, Ի.Տ.Սուրավեգինայի, Վ.Ա.Յասվինի, Ն.Դ.Անդրեևայի, Ն.Ֆ.Ռեյմերսի, Ս.Ն.Զախլեբնիի, Ն.Ն.Մոիսեևի Ս.Ն. Գլազաչևի, Վ.Ի.Վերնադսկու, Օ.Ն.Յանիցկիինի և այլոց կողմից:

Մեր հետազոտության համար կարևոր նշանակություն ունեն անձի արժեհամակագին, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության ձևավորմանը նվիրված հետազոտությունները (Մ.Ս.Կագան, Ա.Ն.Լեոնտև, Մ.Ռոկիչ, Վ.Վ.Նիկոլինա, Կ.Ստոշկուս, Ս. Յանավիչուս, Ի.Ա.Զիմնյայա, Վ.Ա.Բոլոտով, Վ.Վ. Սերիկով, Դ.Ս.Երմակով, Ն.Ֆ.Կազակովա և այլոց):

Զգալի թիվ են կազմում այն աշխատությունները, որոնք վերաբերում են սովորողների էկոլոգիական մշակույթի ձևավորմանը՝ Օ.Ն. Պոնոմարևա, Վ.Ա.Յասվին, Ս.Դ.Դերյաբո, Վ.Ա.Իգնատովա, Տ.Կ.Կլիմենկո և այլք:

Մի շարք հետազոտողներ՝ Ա.Դ.Ուրսուլը, Ա.Գ. Բուսիգինը, Ս.Ա.Ստեպանովը, Վ.Մ.Նազարենկոն, Վ.Ի.Դանիլով-Դանիլյանը, Օ.Ն.Յանիցկին, էկոլոգիական կրթության արդիականացման հիմնախնդիրը դիտարկել են կայուն զարգացման հայեցակարգի և կրթության բովանդակության էկոլոգիականացման տեսանկյունից:

ՀՀ-ում էկոլոգիական կրթության հիմնախնդիրը՝ որպես ընդհանուր կրթության կարևոր բաղադրատարր, ենթարկվել է բազմատեսանկյուն հետազոտության: Հասակարության կայուն զարգացման համատեքստում այն քննարկվել է Կ.Ս.Դանիելյանի կողմից, էկոլոգիական կրթության համակարգի կառավարման հիմնախնդիրը հետազոտվել է Լ.Թ.Ասատրյանի կողմից:

Կրթական հաստատությունների տարբեր աստիճաններում տարբերակված ուսուցման, միջառարկայական կապերի բացահայտմամբ, ուսանողների էկոլոգիական գիտակցության ձևավորման հիմնախնդրով զբաղվել են

Հ.Մ.Ազիզյանը, Հ.Հ.Դերձյանը, Մ.Ա.Ասատրյանը Ա.Գ.Աջամօղլյանը, Լ.Գ.Ավանեսյանը, Փ.Ս.Սարգսյանը: Բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցներն ու ձևերը դիտարկվել են Ա.Ա.Բաղդասարյանի կողմից: Հասարակության էկոլոգիական մշակույթի ձևավորման հիմնախնդրին անդրադարձել են Ռ.Զ.Մարուխյանը, Ա.Ա.Հովսեփյանը:

Թեև էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնախնդիրներին բազմաթիվ հետազոտություններ են նվիրվել, սակայն կրթական նոր հարացույցի և կայուն զարգացման հայեցակարգի թելադրանքով հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության բովանդակության նորացման, այդ գործընթացի օրինաչափությունների և առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտություն է առաջացել, որը ենթադրում է էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացման մանկավարժական նոր մոդելի մշակում, սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության, էկոլոգիական վարքագծի ձևավորման մանկավարժական պայմանների առաջադրում:

Հետազոտության հիմնախնդրի արդիականությունը թելադրված է այդ ոլորտում հետևյալ **հակասությունների ա**ռկայությամբ.

- հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կոմպետենության ձևավորման հասարակության օբյեկտիվ պահանջմունքի և կրթական գործընթացում դրա ոչ բավարար իրականացման միջև,
- էկոլոգիական կրթության բովանդակության մեջ արժեքային բաղադրիչի անհրաժեշտ առկայության և սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական պայմանների ոչ բավարար մշակվածության միջև,
- կրթության արդիականացման պահանջների և հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափությունների և առանձնահատկությունների ոչ բավարար բացահայտվածության միջև,
- էկոլոգիական կրթության գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտության և դրա համար ժամանակակից ձևերի, միջոցների, պայմանների ոչ բավարար ապահովման միջև:

Այդ հակասությունների լուծման անհրաժեշտությամբ է պայմանավորված մեր հետազոտության թեման՝ **«Սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության առանձնահատկությունները հիմնական դպրոցում»:**

Հետազոտության նպատակն է բացահայտել և տեսականորեն հիմնավորել հիմնական դպրոցում էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափություններն ու առանձնահատկությունները և դրանց հիման վրա մշակել սովորողների էկոլոգիական կոմպետենտության, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները:

Հետազոտության օբյեկտը հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացն է:

Հետազոտության առարկան հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության առանձնահատկություններն են և դրանց հաշվառման հիման վրա նրանց էկոլոգիական կոմպետենտության, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական պայմանները:

Հետազոտության գիտական վարկածն այն է, որ հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության, արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության, բնական աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորման արդյունավետությունը կբարձրանա, եթե՝

- հաշվի առնելով ներկայիս էկոլոգիական իրավիճակը և կայուն զարգացման հայեցակարգի հիմնադրույթները՝ էկոլոգիական կրթությունը դիտարկվի որպես սովորողների ընդհանուր կրթության համակարգագոյացնող տարր,
- հիմք ունենալով հետազոտության հիմնախնդրի տեսական-մեթոդաբանական մոտեցումները՝ բացահայտվեն և հիմնավորվեն հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափություններն ու առանձնահատկությունները,
- առաջադրվեն և հիմնավորվեն հիմնական դպրոցում բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում սովորողների էկոլոգիական կոմպետենտության և էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական պայմանները՝ հիմք ընդունելով կոմպետենտային, համակարգային, կայուն զարգացման, արժեբանական, էկոմարդասիրական մոտեցումները,
- մշակվի և հիմնական դպրոցում ներդրվի սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական մոդելը:

Հետազոտության նպատակն իրականացնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Հիմնախնդրին նվիրված գիտական գրականության, մեթոդաբանական, հայեցակարգային մոտեցումների վերլուծության հիման վրա բացահայտել հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափություններն ու առանձնահատկությունները:
2. Մշակել հարցաթերթիկներ և առաջադրանքներ, ստացված տվյալների հիման վրա վերլուծել հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական գործունեության դրդապատճառների, արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության ձևավորվածության առկա վիճակը, սահմանել մակարդակները;
3. Բացահայտել և փորձարարությամբ հիմնավորել բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության, աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները:
4. Մշակել և գիտափորձով հիմնավորել դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական մոդելը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել էկոլոգիական կրթության և դաստիարակության վերաբերյալ փիլիսոփայական, մանկավարժական, հոգեբանական, սոցիոլոգիական հայեցակարգերն ու տեսությունները՝

- ՀՀ օրենքը ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին,
- էկոլոգիական կրթության վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, մեթոդական, մասնագիտական գրականությունը և հայեցակարգերը (Ի.Դ. Զվերև, Ի.Տ.Սուրավեգինա, Կ. Լորենց, Ն.Ֆ.Ռեյմերս, Ս.Ն.Զախլեբնի, Ն.Ն.Մոիսեև, Ս.Ն. Գլազաչև, Բ.Տ.Լիխաչև, Վ.Ի.Վերնադսկի, Օ.Ն.Յանիցկի, Օ. Լեոպոլդ, Օ.Ն. Պոնոմարևա, Ա.Դ.Ուրսուլ, Ա.Գ. Բուսիգին, Յու.Գ.Շվարցման, Վ.Պ.Գորլաչև, Ս.Ա.Ստեպանով, Տ.Կ.Կլիմենկո, Վ.Ա.Յասվին, Ս.Դ.Դերյաբո, Վ.Վ.Նիկոլինա, Լ.Թ.Ասատրյան, Մ.Ա.Ասատրյան,Փ.Ա.Սարգսյան, Հ.Մ.Ազիզյան, Ա.Գ.Աջամօղլյան, Ա.Ս.Ներկարարյան, Ա.Ա.Բաղդասարյան և այլք),
- Կայուն զարգացման հայեցակարգը (Ա.Դ.Ուրսուլ, Վ.Ի.Դանիլով-Դանիլյան, Օ.Ն.Յանիցկի, Դ.Վ. Զերկալով, Ս.Ա.Ստեպանով, Կ.Ս.Դանիելյան),
- անձի արժեհամակագին և արժեքային կողմնորոշումների ձևավորմանը նվիրված տեսական դրույթները (Կոնֆուցի, Արիստոտել, Էպիկուր, Լ.Բ.Ալբերտ, Մ.Ս.Կագան, Է.Կանտ, Լ.Ի.Բոժովիչ, Ա.Գ.Զդրավոմիսլովա, Ա.Ն.Լեոնտև, Մ.Ռոկիչ, Վ.Վ.Նիկոլինա, Կ.Ստոշկուս, Ս. Յանավիչուս, Լ.Վ. Թորգոմյան),
- էկոլոգիական կոմպետենտության ձևավորման հիմնախնդրին նվիրված աշխատությունները (Ի.Ա.Զիմնյայա, Ա.Վ.Խուտորսկոյ, Է.Ֆ.Զեյեր, Վ.Ա.Դյոմին, Ա.Ա.Վերբիցկի, Ա.Կ.Մարկովա, Ա.Մ.Նովիկով, Ն.Վ.Կուզմինա, Ա.Ա. Դերկաչ, Ա.Ն.Զախլեբնի, Ի.Գ.Ագապով, Ջ. Ռավեն, Վ.Ա.Բոլոտով, Վ.Վ. Սերիկով, Գ.Մ. Խոջասպիրովա և այլք),
- կրթության շարունակականության վերաբերյալ գաղափարները և մեթոդաբանական մոտեցումները (Դավիթ Անհաղթ, Գրիգոր Նարեկացի, Ղևոնդ Ալիշան, Կոնֆուցի, Գ.Պ.Զինչենկո, Վ.Ա.Բոլոտով, Ա.Դ.Ուրսուլ, Ա.Ա.Վերբիցկի, Լ.Պ.Ալեքսեևա, Ի.Վ.Վինոգրադով և այլք),
- անձի տարիքային առանձնահատկությունների վերաբերյալ հայտնի մանկավարժների, հոգեբանների հայացքներն ու տեսությունները (Գրիգոր Տաթևացի, Պյութագորաս, Է.Էրիկսոն, Լ.Ս. Վիգոտսկի, Դ.Բ.Էլկոնին, Ա.Ն. Լեոնտև, Ս.Լ.Ռուբինշտեյն, Ջ.Դյուի, Ժ.Պիաժե և այլք),
- հետազոտության իրականացման, արդյունքների վերլուծության նպատակով հիմք ենք ընդունել Դ.Ա. Լեոնտևի, Բ.Բասսի, Մ.Ռոկիչի մեթոդիկաները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են **տեսական և էմպիրիկ հետևյալ մեթոդները՝**

- հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, մեթոդաբանական, մասնագիտական գրականության, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերի վերլուծություն, մանկավարժական մոդելավորում,
- էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, զրույց, անկետավորում, թեստավորում, հարցազրույց, մանկավարժական գիտափորձ, փորձարարական հետազոտության տվյալների վերլուծություն, դրանց մշակման մաթեմատիկական մեթոդներ:

Հետազոտության բազա են հանդիսացել Երևանի թիվ 177 հիմնական դպրոցը, Սիսիան քաղաքի թիվ 2, թիվ 5 հիմնական դպրոցները, Կոտայքի մարզի Արզականի հանրակրթական դպրոցը:

Հետազոտությունն իրականացել է **երեք փուլով:**

Առաջին փուլում (2002-2004) ուսումնասիրվել են հետազոտության հիմնախնդրին նվիրված գիտական աղբյուրները, որոշվել են հետազոտության հիմնախնդիրը, թեման, սահմանվել է նպատակը, առաջադրվել են

հետազոտության գիտական վարկածը և խնդիրները, մշակվել է փորձարարական հետազոտության մեթոդիկան:

Երկրորդ փուլում (2005-2007) ձևավորվել են ստուգողական և փորձարարական խմբերը, ձևակերպվել են հետազոտության հիմնադրույթները, անցկացվել է հաստատող գիտափորձ, վերլուծվել են ստացված տվյալները, նախանշվել են հետազոտության հետագա ուղղությունները:

Երրորդ փուլում (2008-2011) որոշակիացվել և փորձարարությամբ հիմնավորվել են սովորողների էկոլոգիական կոմպետենտության և էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական պայմանները: Մշակվել և փորձարկվել է հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ իրականացման մանկավարժական մոդելը: Վերլուծվել և ամփոփվել են հետազոտության արդյունքները, ձևակերպվել են եզրակացությունները:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական և մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա վերլուծվել են «էկոլոգիական գիտելիք», «էկոլոգիական գիտակցություն», «էկոլոգիական աշխարհայացք» «էկոլոգիական մշակույթ» հասկացությունները: Դիտարկվել և նոր ձևակերպում է տրվել «էկոլոգիական արժեք», «էկոլոգիական արժեքային կողմնորոշումներ», «էկոլոգիական կոմպետենտություն» հասկացություններին:
2. Հիմնվելով մեթոդաբանական մի շարք մոտեցումների և հետազոտական տվյալների վրա՝ բացահայտվել և հիմնավորվել են հիմնական դպրոցի սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափությունները:
3. Բացահայտվել և հիմնավորվել են հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության առանձնահատ-կությունները՝
   - բազմատեսանկյունությունը,
   - կրթական համակարգի վերակողմնորոշումը դեպի կայուն զարգացման ռազմավարություն,
   - աշխարհայացքային բնույթը,
   - էկոլոգիական կրթության շարունակականությունը,
   - էկոլոգիական արժեքային կողմնորոշումների և էկոլոգիական կոմպետենտության ձևավորման անհրաժեշտությունը:
4. Հիմնավորվել են հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության, աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորման, էկոլոգիական կրթության շարունակականության ապահովման արդյունավետության մանկավարժական պայմանները:
5. Մշակվել, տեսականորեն հիմնավորվել և փորձարարությամբ ստուգվել է հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի իրականացման մանկավարժական մոդելը, որը ներառում է նպատակը, մեթոդաբանական մոտեցումները, դիդակտիկական սկզբունքները, էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափությունները և առանձնահատկությունները, մանկավարժական պայմանները, ակնկալվող արդյունքները:

Հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է մանկավարժության ոլորտում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրներին վերաբերող գիտատեսական ուսումնասիրության հարստացմամբ, հիմնական դպրոցի սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափությունների և առանձնահատկությունների բացահայտմամբ և այդ գործընթացի կատարելագործման մանկավարժական պայմանների հիմնավորմամբ:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ մեր կողմից մշակված հիմնական դպրոցի սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության մանկավարժական մոդելը, մանկավարժական պայմանների համալիրը գործնական օգնություն կլինեն ուսուցիչներին, ինչպես նաև կնպաստեն սովորողների կոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության և էկոբարոյական վարքի ձևավորմանը և ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Կրթության համակարգի արդիականացման և կայուն զարգացման համատեքստում առաջնային են դառնում հիմնական դպրոցում կրթության բովանդակության էկոլոգիականացումը, դրա կազմակերպման նոր ձևերի, միջոցների, մեթոդների առաջադրումը, որոնք որոշակիորեն կնպաստեն «մարդ-բնություն-հասարակություն» համակարգում կայուն հավասարակշռության պահպանմանը:
2. էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափությունների և առանձնահատկությունների բացահայտումը կարևոր պայման է հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի, սովորողների էկոլոգիական գործունեության դրդապատճառների, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության, աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորման արդյունավետության ապահովման համար:
3. «էկոլոգիական արժեք», «էկոլոգիական արժեքային կողմնորոշումներ», «էկոլոգիական կոմպետենտություն» հասկացությունների նոր ձևակերպումները.
   - էկոլոգիական արժեքները՝ որպես համամարդկային արժեքային համակարգի ենթակառուցվածք, որոշում են բնության օբյեկտների և երևույթների, կենսոլորտի կայունության, բնության և հասարակության կոէվոլյուցիոն զարգացման նշանակությունը մարդու և ընդհանրապես հասարակության համար:
   - էկոլոգիական արժեքային կողմնորոշումները բնութագրում են յուրաքանչյուր անձի, սոցիալական խմբիէկոլոգիապես անվտանգ և նպատակաուղղված գործունեությունը, էկոլոգիական արժեքների և էկոբարոյական մշակույթի ձևավորվածության աստիճանը: Հանդես գալով որպես անձի ակտիվության և վաքի կարգավորիչներ՝ էկոլոգիական արժեքային կողմնորոշումները ապահովում են անձի համար նշանակալի էկոլոգիական արժեքների և հասարակության մեջ ընդունելի նորմերի արդյունավետ հարաբերակցությունը:

- էկոլոգիական կոմպետենտությունը էկոլոգիական կրթության արդյունքն է և ենթադրում է սովորողների էկոլոգիական գիտելիքների, կարողությունների, հմտությունների, արժեքային կողմնորոշումների ձևավորվածության, էկոլոգիական իրազեկվածության որոշակի մակարդակ և էկոլոգիապես նպատակահարմար գործունեության իրականացման կարողունակություն:

4. Հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության, աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները.

- **կազմակերպաառարկայական՝** էկոլոգիական կրթության գործընթացում էկոլոգիական պատկերացումների, հասկացությունների, գիտելիքների, էկոլոգիական արժեքների համակարգի, էկոլոգիական կոմպետենտության ձևավորման համար անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրների հասանելիության ապահովումը, ուսուցման գործընթացի բովանդակության նպատակաուղղված պլանավորումը, սովորողների դրդապատճառային ոլորտի, բնաճանաչողական ակտիվության խթանման, էկոլոգիապես անվտանգ գործունեության իրականացման միջոցները, ձևերն ու մեթոդները,
- **ընթացակարգային՝** ուսուցիչների մասնագիտական կոմպետենտությունը, սովորողների գործունային ոլորտի խթանման և մտածական գործընթացի ակտիվացման փուլային ապահովումը, տեղեկատվական, էկոկրթական և էկոմշակութային ընդհանուր միջավայրի ստեղծումը, մանկավարժական գործընթացի սուբյեկտների արդյունավետ փոխգործակցությունը:

5. Հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի արդյունավետության ապահովման մանկավարժական մոդելը, որը ներառում է այդ գործընթացի նպատակը, մեթոդաբանական մոտեցումները, օրինաչափությունները և առանձնահատկությունները, դիդակտիկական սկզբունքները, մանկավարժական պայմանները և ակնկալվող արդյունքները:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում են հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մեթոդական ու մասնագիտական գրականության, տեսությունների ու հայեցակարգերի համալիր և համեմատական վերլուծությամբ, հետազոտության տեսական-մեթոդաբանական բազայով, հետազոտության նպատակին, առարկային ու խնդիրներին համարժեք ընտրված մեթոդներով, տեսական հետազոտության փորձարարական հիմնավորմամբ, փորձարարական հետազոտության տվյալների վերլուծությամբ, ամփոփմամբ և հիմնավորված եզրահանգումներով:

Հետազոտության փորձաքննությունը իրականացվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի նիստերում, գիտաժողովներում /2010., Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտաժողով, Գորիսի պետական համալսարանի միջազգային II գիտաժողով 2011թ., Հանրապետական գիտական նստաշրջան, Գյումրի 2012թ., Խ.Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված գիտական նստաշրջան, 2013թ./,գիտափորձի բազա հանդիսացած դպրոցներում, ինչպես նաև ատենախոսության թեմայի շրջանակներում հրատարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 156 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ **«էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնախնդրի գիտատեսական հիմնավորումը»** խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին՝ **«էկոլոգիական կրթության և դաստիարակության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը»** ենթագլխում, ներկայացված են հետազոտության հիմնախնդրին նվիրված հայ և համաշխարհային փիլիսոփայական, էկոլոգիական, հոգեբանամանկավարժական տեսությունները, հայեցակարգերը, որոնցում կարևորվել է բնության նկատմամբ անձի պատասխանատվության դաստիարակումը՝ որպես գալիք սերունդների, համայն մարդկության առջև պատասխանատվության դրսևորման ձև:

Հիմնավորվել է, որ կրթության արդիականացման համատեքստում այսօր առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում **կրթության բովանդկության էկոլոգիականցման խնդիրը**, որը ենթադրում է.

- էկոլոգիական կրթության զարգացման ռազմավարական նոր ուղիների որոնում, էկոլոգիական կրթության շարունակականության ապահովում,
- տեղեկատվական, էկոկրթական և էկոմշակութային ընդհանուր միջավայրի ստեղծում, որը պետք է դառնա կրթական բոլոր հաստատությունների, մշակութային օջախների, արտադրական օբյեկտների, ՁԼՄ-ների գերակա խնդիրը՝ նպատակ ունենալով նպաստելու հասարակության էկոլոգիական իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Դիտարկված են էկոլոգիական կրթության հայեցակարգը, նպատակները, համաշխարհային պրակտիկայում առկա էկոլոգիական կրթության երեք մոդելները: Նշվում է, որ կայուն զարգացման հայեցակարգում ելակետային են դիտվում կրթության և դաստիարակության մարդասիրացումը, բովանդակության միջգիտականությունը, էկոլոգիականացումը, ինտեգրումը, զգայական, գործունային, ճանաչողական ոլորտների միասնությունը:

Ընդհանրացնելով էկոլոգիական կրթության զարգացման ժամանակակից փուլերի սոցիալ-մանկավարժական և մեթոդաբանական տեսանկյունները՝ նշվում է, որ էկոլոգիական կրթության նպատակը սովորողների էկոլոգիական գիտելիքների, էկոլոգիական գիտակցության, էկոարժեհամակարգի և էկոլոգիական կոմպետենտության ձևավորումն է:

Հիմնախնդրի շրջանակներում դիտարկված են «էկոլոգիական մշակույթ», «էկոլոգիական գիտակցություն», «էկոլոգիական աշխարհայացք» հասկացությունները, որոնք «մարդ-հասարակություն-բնություն» համակարգում հենքային են և բնորոշում են անձի արժեքային կողմնորոշումները, էկոլոգիական կոմպետենտությունը, էկոլոգիական անվտանգ կենսագործունեությունը:

«Կենսաբանական և սոցիալական գործոնների դերը հիմնական դպրոցի սովորողի անձի զարգացման և ձևավորման գործընթացում» խորագրով երկրորդ ենթագլխում հիմնավորվել է, որ այսօր առանցքային հիմնախնդիր է անձի ձևավորման, զարգացման և սոցիալականացման գործընթացների առանձնահատկությունների դիտարկումը:

Դիտարկված են դեռահասների զարգացման և ձևավորման վրա ազդող գործոնները, տարիքային այդ փուլի առանձնահատկությունների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները և առանցքային գաղափարները: Էկոլոգիական կրթության, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության տեսանկյունից հանգամանալից վերլուծվել են տարիքային այդ փուլում ձևավորվող նորագոյացությունները:

Հիմնավորվել է, որ ժամանակակից հսկայածավալ տեղեկատվության յուրացման արդյունքում վերափոխվում են անձնապես նշանակալի դիրքորոշումները, արժեքները, պահանջմունքները, հետաքրքրությունները: Հիմնական դպրոցի բնագիտական առարկաների դասավանդման գործընթացում էկոլոգիական արժեքների, էկոլոգիական կոմպետենտության նպատակային ձևավորումը կապված է բնության նկատմամբ սովորողների հուզաարժեքային վերաբերմունքի, համոզմունքների և փորձի նպատակաուղղված ձևավորման հետ: Անձի ձևավորման գործընթացում բնական միջավայրը և անձի ակտիվությունը որոշում են նրա գործունեության բնույթը և «մարդ-բնություն-հասարակություն» փոխազդեցության օրինաչափությունները: Այդ պատճառով առաջնային են համարվում սովորողի անձի ակտիվությունը, պահանջմունքադրդապատճառային ոլորտը, որոնք պայմանավորում են սովորողի էկոլոգիապես նպատակահարմար գործունեությունը, էկոբարոյական վարքագիծը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափությունները և առանձնահակտությունները»** խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափությունները» ենթագլխում հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից բացահայտվել, տեսականորեն հիմնավորվել և բնութագրվել են էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացին բնորոշ օրինաչափությունները:

Հիմնախնդրի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը և բազմամյա դիտարկումները թույլ տվեցին փաստել, որ հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացը օրինաչափորեն պայմանավորված է՝

1. Հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության առանձնահատություններով:

2. էկոլոգիական կրթության գործընթացի՝ կողմնորոշվածությամբ՝ սովորողների էկոգիտակցության, էկոաշխարհայացքի, էկովարքագծի ձևավորմանը:
3. Ուսուցչի մասնագիտական մանկավարժական կոմպետենտության մակարդակով:
4. Բնության նկատմամբ սովորողների հուզաարժեքային ոլորտով, հոգևոր-բարոյական էքզիստենցիալների ներգրավվածությամբ:
5. Հիմնական դպրոցի սովորողների կողմից էկոլոգիական ակտիվ գործունեության իրականացմամբ:
6. Կրթության արդիականացման համատեքստում ինտեգրատիվ գործընթացներով:
7. էկոլոգիական կրթության բովանդակային և ընթացակարգային բաղադրիչների միասնությամբ:
8. Ավանդական մեթոդների կիրառումից անձնակենտրոն մեթոդներին անցմամբ:
9. Մանկավարժական գործընթացի սուբյեկտների փոխազդեցությամբ:

Դիտարկվել, առանձնացվել և բնութագրվել են անձի էկոլոգիական դաստիարակվածության չափանիշները:

Անձի էկոլոգիական դաստիարակվածության որոշման չափանիշներն են՝ ճանաչողական, աշխարհայացքային, էկոլոգիապես արդարացված վարքի դրսևորումը, անձի սոցիալական նշանակալի որակների առկայությունը, բնության հուզաարժեքային ընկալումը:

Երկրորդ ենթագլխում՝ «**Հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության առանձնահատկությունները**», դիտարկվել են էկոլոգիական կրթության և դաստիարակության բովանդակության՝ հետազոտողների կողմից առանձնացված գիտական, ամբողջականության, նորմատիվային, գործունային, տեխնիկայի և տեխնոլոգիաների էկոլոգիականացման տեսանկյունները:

Ներկայացված են էկոլոգիական կրթության գերակայությունները: Հիմնական դպրոցի սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը, այդ գործընթացի օրինաչափությունների բացահայտումը և փորձարարական հետազոտության արդյունքները մեզ հնարավորություն տվեցին սահմանելու և բնութագրելու հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության բնորոշ առանձնահատկությունները՝

- բազմատեսանկյունությունը,
- կրթական համակարգի վերակողմնորոշումը դեպի կայուն զարգացման ռազմավարություն,
- աշխարհայացքային բնույթը,
- էկոլոգիական կրթության շարունակականությունը,
- էկոլոգիական արժեքային կողմնորոշումների և էկոլոգիական կոմպետենտության ձևավորման անհրաժեշտությունը:

Նոր ձևակերպում են տրվել «էկոլոգիական արժեք», «էկոլոգիական արժեքային կողմնորոշումներ» հասկացություններին: Նշվում է, որ էկոլոգիական արժեքները՝ որպես համամարդկային արժեքային համակարգի ենթակառուցվածք, որոշում են բնության օբյեկտների և երևույթների,

կենսոլորտի կայունության, բնության և հասարակության կոէվոլյուցիոն զարգացման նշանակությունը մարդու և ընդհանարպես հասարակության համար:

էկոլոգիական արժեքներն արտացոլվում են անձի էկոլոգիական արժեքային կողմնորոշումներում, որոնք բնութագրում են յուրաքանչյուր անձի, սոցիալական խմբի էկոլոգիապես անվտանգ և նպատակաուղղված գործունեությունը, էկոբարոյական մշակույթի ձևավորվածության աստիճանը: Հանդես գալով անձի ակտիվության և վաքի կարգավորիչներ՝ էկոլոգիական արժեքային կողմնորոշումները ապահովում են անձի համար նշանակալի էկոլոգիական արժեքների և հասարակության մեջ ընդունելի նորմերի արդյունավետ հարաբերակցությունը:

Դիտարկված են հիմնական դպրոցում բնագիտական առարկաների արժեուղղորդ հնարավորությունները:

Հիմնավորված է, որ հանրակրթական դպրոցի նպատակը առանցքային կոմպետենցիաների ձևավորումն է, որոնք անհարժեշտ են սովորողին ոչ միայն ուսուցման գործընթացում, այլև հետագա մասնագիտական գործունեության ոլորտում ինքնիրացվելու համար և ենթադրում է խնդիրների ինքնուրույն լուծման, արդյունքների ինքնուրույն վերլուծման և գնահատման կարողություն:

Դիտարկված և բնութագրված է «էկոլոգիական կոմպետենտություն» հասկացության էությունը:

Հիմնավորվել է, որ էկոլոգիական կրթության արդյունքում են ձևավորվում անձի նպատակաուղղված էկոլոգիական դիրքորոշումները, արժեքային կողմնորոշումները, էկոլոգիական կոմպետենցիաները: Նշված կոմպետենցիաները ձևավորվում են նաև ի հաշիվ էկոլոգիական ուղղվածությամբ ինտեգրված դասընթացների, ինչպես նաև դասավանդվող առարկաների էկոլոգիական ներուժի, որոնց ամբողջությունն էլ կազմում է անձի էկոլոգիական կոմպետենտությունը: Ելնելով վերոբերյալից՝ կարելի է սահմանել, որ էկոլոգիական կոմպետենտությունը էկոլոգիական կրթության արդյունքն է և ենթադրում է սովորողների էկոլոգիական գիտելիքների, կարողությունների, հմտությունների, արժեքային կողմնորոշումների ձևավորվածության, էկոլոգիական իրազեկվածության որոշակի մակարդակ և էկոլոգիապես նպատակահարմար գործունեության իրականացման կարողունակություն:

Երրորդ՝ «**էկոլոգիական կրթության դերը սովորողների էկոլոգիական, բնական աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորման գործում**» ենթագլխում հիմնավորվել է, որ ներկայիս էկոլոգիական իրավիճակը մարդու տնտեսական գործունեության արդյունքն է, քանի որ 21-րդ դարում առավել գերակա է դառնում մարդու կողմնորոշումը դեպի նյութական բարեկեցությունը, ինչը հանգեցնում է ոչ միայն տեղական, տարածաշրջանային, այլև մոլորակային, գլոբալ մասշտաբով բնական պաշարների անխնա օգտագործումը և մոլորակի տեխնածին ծանրաբեռնվածությունը: Արդյունքում մշտապես առկա են բնական, էկոլոգիական աղետների վտանգը, մարդկային և արտադրական ռեսուրսների ոչնչացման ռիսկերի ավելացումը:

Աղետները կյանքին սպառնացող բնական միջավայրի հանկարծակի, կտրուկ փոփոխություններ են:

Ներկայացված են աղետների տեսակները, որոնց դիմակայելու կարևոր միջոցը աղետներին դիմակայելու մարդու կրթվածությունն է, իրազեկվածությունը: Հիմնավորվել է, որ բնական աղետների առաջացման պատճառների ուսումնասիրումը, ծագած արտակարգ իրավիճակներում վարքի

կանոնների յուրացումը նպաստում են աղետների ռիսկերի նվազեցմանը և օգնում մարդուն ճիշտ որոշումներ կայացնելու և հնարավորինս նվազագույն կորուստներով դրանց դիմակայելու: Անվտանգ կենսագործունեության, կենսահամակարգերի, բնական և մարդածին գործոնների վերաբերյալ գիտելիքների յուրացումը բնական աղետների դիմակայելու կարողության ձևավորման սկզբնական կարևոր օղակն է:

Հիմնական դպրոցում բնագիտական առարկաների բովանդակությունը ներառում է համապատասխան գիտելիքներ, որոնց յուրացումը անվտանգ կենսագործունեության կարևոր պայման է և պահանջում է ուսուցիչների, ծնողների, ամբողջ հասարակության համագործակցությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի գիտամեթոդական ապահովումը» խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից**:**

Առաջին՝«Հիմնական պրոցում էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի մոդելավորումը» ենթագլխում ներկայացվել և հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից հիմնավորվել են էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացման հենքային՝ կոմպետենտային, համակարգային, կայուն զարգացման, արժեբանական, էկո-մարդասիրական հայեցակարգային մոտեցումները:

Հիմնավորվել է, որ արդի ժամանակաշրջանում կրթական հարացույցի փոփոխման և դրա հիման վրա կրթության նպատակների վերաիմաստավորման պարագայում առանձնակի կարևորություն է ստանում կրթության նկատմամբ **կոմպետենտային մոտեցումը:**

Համաձայն կոմպետենտային մոտեցման՝ կրթության նպատակը այն կարողությունների ձևավորումն է, որոնց սովորողը կարող է տիրապետել կրթական գործունեության ընթացքում և գործնականում կիրառել:

Համակարգային մոտեցումը թույլ է տալիսէկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացը դիտարկել որպես համակարգ և բացահայտել բնագիտական առարկաների ուսուցման գործընթացի արդյունավետ կառուցվածքը, դրանում օրինաչափ գործող կապերը:

«Մարդ-բնություն-հասարակություն» բազմագործառութային համակար-գի ներդաշնակ գործունեության տեսական վերլուծության և պրակտիկայի հիմքում **կայուն զարգացման մոտեցումն** է, որը ենթադրում է շրջակա միջավայրի պահպանության և էկոլոգիական անվտանգության ապահովման քաղաքական, տնտեսական, սոցիալական միասնականությունը և էկոլոգիական տեսանկյունից կայուն զարգացումը: Այս մոտեցմամբ իրականության մեջ գործող փոխադարձ կապերը դիտարկվում են որպես երկկողմ գործընթաց՝ մարդուց դեպի բնություն և բնությունից դեպի մարդը:

Հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի արդյունավետության ապահովման համար էական է համարվել նաև **արժեբանական մոտեցումը,** որը թույլ է տալիս հիմնավորելու, որ էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը հիմնական դպրոցի սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնական միջոցն է:

Այսօր «մարդ-կենսոլորտ» բազմատեսանկյուն փոխհարաբերությունը անհրաժեշտ է դիտարկել **էկո-մարդասիրական մոտեցման տեսանկյունից:**

Բնագիտական կրթության մարդասիրացումը նպատակաուղղված է անձի բարոյական բարձր որակների, քաղաքացիական դիրքորոշման, էկոլոգիական կոմպետենտության, բնության և մարդկանց նկատմամբ պատասխանատվության զարգացմանը:

Մեր հետազոտությունում հիմնական դպրոցի սովորողների էկոլոգիական կրթության մոդելավորումը դիտարկվել է որպես բնագիտական առարկաների ուսուցման մեթոդիկայի կառուցվածքային բաղադրիչ, որի շնորհիվ արդյունավետ է դառնում սովորողների էկոլոգիական կոմպետենտության, էկոգիտակցական ոլորտի ձևավորման գործընթացը:

Դիտարկված և բնութագրված են հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կոմպետենտության, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, աղետներին դիմակայելու կարողության ձևավորման ընդհանուր դիդակտիկական սկզբունքները:

Դիտարկված մեթոդաբանական մոտեցումները և դիդակտիկական սկզբունքները հայեցակարգային հիմք են հանդիսացել էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի կազմակերպման արդյունավետ մանկավարժական մոդելի կառուցման համար:

Երկրորդ՝ «Հիմնական դպրոցի սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի իրականացման մանկավարժական պայմանները» ենթագլխում ներկայացվել և բնութագրվել են հետազոտության ընթացքում բացահայտված սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի՝ բաղադրիչները և արդյունավետ իրականցման մանկավարժական պայմանները՝ **կազմակերպաառարկայական** և **ընթացակարգային:**

Երրորդ՝ «Փորձարարական հետազոտության իրականացումը, արդյունքների վերլուծությունը և ամփոփումը» ենթագլխում ներկայացված է փորձարարական հետազոտության նպատակը՝ հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափությունների և անձնահատկությունների հիմնավորումը և դրա հիման վրա բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության ձևավորման, էկոլոգիական կրթության շարունակականության ապահովման՝ մեր կողմից մշակված մանկավարժական պայմանների արդյունավետության ստուգումը:

Բնութագրված են փորձարարական աշխատանքի փուլերը, վերլուծված են սովորողների կողմից թեստային առաջադրանքների կատարման, հարցումների արդյունքները:

Սահմանված են հիմնական դպրոցի սովորողների էկոլոգիական գիտելիքների ձեռբերման, էկոլոգիական գործունեության և վարքի դրդապատճառների ձևավորվածության մակարդակները: Մեր կողմից դիագնոստիկայի համար օգտագործվել են Մ.Ռոկիչի արժեքային կողմնորոշումների թեստային մեթոդիկան, Բ.Բասսի «Անձի ուղղվածության ախտորոշման», Դ.Ա.Լեոնտևի «Կյանքի կողմնորոշիչներ» մեթոդիկաները:

Ներկայացնում ենք փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծության մեկ օրինակ: Դեռահասների արժեհամակարգում էկոլոգիական արժեքների դերի և տեղի գիտակցման արժեքային կողմնորոշումների մակարդակը պարզելու համար օգտագործել ենք Մ.Ռոկիչի անձի արժեքային

կողմնորոշումների մեթոդիկան, որը բովանդակային առումով փոփոխվել և համապատասխանեցվել է մեր հետազոտության նպատակին և խնդիրներին: Թեստի արդյունքները ենթարկվել են մաթեմատիկական մշակման և ներկայացված են աղյուսակի և տրամագրի տեսքով:

Աղյուսակ 1
Սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակները գիտափորձից առաջ/ հետո

	Ա Ր Ժ Ե Ք Ն Ե Ր	Միջին գնահատական			
		Փորձ. առաջ		Փորձ.հետո	
		ս/տ	փ/ձ	ս/տ	փ/ձ
1.	Կյանքը	17.1	17.2	16.8	12.1
2.	Առողջությունը	14.1	13.9	13.5	11
3.	Բնությունը	7.8	7.7	8.	11.4
4.	Ընտանիքը	12.4	12.3	12.4	11.1
5.	Գիտելիքը	11.4	11.7	11.7	11.6
6.	Ազատությունը, ինքնուրույնությունը	9.5	9.4	9.8	9.4
7.	Սերը մարդկանց, բնության հանդեպ	4.3	4.6	4.6	9
8.	Սիրելի մասնագիտությունը, աշխատանքը	15.9	16.2	15.5	12.1
9.	Նյութական բարեկեցիկությունը	16.5	16.1	16.4	10.7
10.	Բնության նկատմամբ պատասխանատու և հոգատար վերաբերմունքը	5.4	5.2	5.3	8.5
11.	Ինքնակառավարումը	7.2	7.4	7.1	7.1
12.	Բնության ճանաչողությունը	4	4.3	4.1	8.5
13.	Բնության հետ ներդաշնակ փոխհարաբերությունը	3.5	4.1	3.7	8.3
14.	Սեփական կարծիքն արտահայտելը	7.9	7.4	7.9	8
15.	Հոգևոր և ֆիզիկական զարգացումը	7.5	7.6	7.8	7.3
16.	Հավատարիմ ընկերները	12.1	11.4	12.3	9.7
17.	Համբերությունը, հանդուրժողականությունը	7.5	7.7	7	8.1
18.	Ստեղծագործելու ցանկությունը	6.9	6.8	7.1	7.1

Արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ստուգողական խմբերում դեռահաս դպրոցականներն առաջնային են դիտում կյանքը, նյութական բարեկեցիկությունը, ընկերները, առողջությունը, իսկ էկոլոգիական արժեքները ավելի ցածր վարկանիշ ունեն՝ բնությունը, որպես արժեք, սերը բնության հանդեպ, բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը, ներդաշնակ փոխհարաբերությունը: Սովորողները նշում են, որ «ամենակարևորը կյանքն է», «նյութական ապահովածությունը», «լավ վարձատրվող աշխատանքով կարելի է հասնել ամեն ինչի» և այլն:





Տրամագիր 1.2. Սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակադակները գիտափորձից առաջ/ հետո

Փորձարարական խմբերում գիտափորձի ավարտին գրանցվեց դրական տեղաշարժեր: Արդյունքում պարզ դարձավ, որ սովորողները գիտակցում են բնությունը դերը և նշանակությունը մարդու կյանքում՝ բնությունը մարդու կացարանն է: Իսկ «նյութական ապահովածության», «լավ վարձատրվող աշխատանքի» համար ըստ նրանց՝ առաջնային է բնության հետ ներդաշնակ փոխհարաբերությունը, բնության նկատմամբ պատասխանատու և հոգատար վերաբերմունքը:

Այսպիսով՝ նպատակաուղղված և մեթոդապես ճիշտ կազմակերպված գիտափորձի արդյունքում մենք հանգեցինք դեռահաս դպրոցականների էկոլոգիական կոմպետենտության և էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորման ցուցանիշների բարելավմանը: Ստացված տվյալների համեմատական վերլուծությունը հաստատեց հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կոմպետենտության և էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորման՝ մեր կողմից մշակված մանկավարժական պայմանների և մանկավարժական մոդելի արդյունավետությունը:

Հետազոտությամբ ստացած արդյունքները հավաստեցին մեր կողմից առաջարկված գիտական վարկածի ճշմարտացիությունը՝ թույլ տալով ձևակերպել հետևյալ **եզրակացությունները.**

1. Կրթության համակարգի արդիականացման և կայուն զարգացման համատեքստում անհրաժեշտ է դառնում հիմնական դպրոցի սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության նոր մոդելի մշակումը: Էկոլոգիական կրթությունը ընդհանուր կրթության համակարգագոյացնող տարրն է, որն ենթադրում է բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում ոչ միայն սովորողների կողմից որոշակի գիտելիքների յուրացում, այլև էկոլոգիական գործնական կարողությունների, հմտությունների, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության, էկոբարոյական մշակույթի ձևավորում:
2. Հիմնախնդրի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը և մեր բազմամյա դիտարկումները թույլ տվեցին բացահայտել հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափությունները և հիմնավորել, որ հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացը օրինաչափորեն պայմանավորված է՝

- հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության առանձնահատուկություններով,
- էկոլոգիական կրթության գործընթացի՝ կողմնորոշվածությամբ, սովորողների էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական աշխարհայացքի, էկոբարոյական վարքագծի ձևավորմանը,
- ուսուցչի մասնագիտական մանկավարժական կոմպետենտության մակարդակով,
- բնության նկատմամբ սովորողների հուզաարժեքային ոլորտով,նրանց հոգևոր-բարոյական էքզիստենցիալների ներգրավվածությամբ,
- հիմնական դպրոցի սովորողների կողմից էկոլոգիական ակտիվ գործունեության իրականացմամբ,
- կրթության արդիականացման համատեքստում ինտեգրատիվ գործընթացներով,
- էկոլոգիական կրթության բովանդակային և ընթացակարգային բաղադրիչների միասնությամբ,
- ավանդական մեթոդների կիրառումից անձնակենտրոն մեթոդներին անցմամբ,
- մանկավարժական գործընթացի սուբյեկտների փոխազդեցությամբ:

3. Որոշակիացվել և բնութագրվել են հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության առանձնահատկությունները՝
   - բազմատեսանկյունությունը,
   - կրթական համակարգի վերակողմնորոշումը դեպի կայուն զարգացման ռազմավարություն,
   - աշխարհայացքային բնույթը,
   - էկոլոգիական կրթության շարունակականությունը,
   - էկոլոգիական արժեքային կողմնորոշումների և էկոլոգիական կոմպետենտության ձևավորման անհրաժեշտությունը:
4. Հիմնախնդրի վերաբերյալ գիտատեսական, մեթոդաբանական գրականության վերլուծության, հայեցակարգային ժամանակակից մոտեցումների հիման վրա նորովի են ձևակերպվել «էկոլոգիական արժեք», «էկոլոգիական արժեքային կողմնորոշումներ», «էկոլոգիական կոմպետենտություն» առանցքային հասկացությունները, հիմնավորվել է հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կոմպետենտության ձևավորման անհրաժեշտությունը:
5. Արդի կրթական բարեփոխումների համատեքստում ուսումնասիրվել է բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների և էկոլոգիական կոմպետենտության ձևավորվածության առկա մակարդակը, բացահայտվել այն դժվարությունները, որոնք հանդիպում է ուսուցիչը այդ խնդրի լուծման գործընթացում:
6. Մշակվել, տեսականորեն հիմնավորվել և փորձարարությամբ ստուգվել են հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի իրականացման մանկավարժական պայմանները՝
   - կազմակերպաառարկայական,
   - ընթացակարգային:

7. Մշակվել և փորձարարությամբ հաստատվել է հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի իրականացման արդյունավետ մանկավարժական մոդելը, որը ներառում է այդ գործընթացի նպատակը, մեթոդաբանական մոտեցումները, դիդակտիկական սկզբունքները, օրինաչափությունները և առանձնահատկությունները, մանկավարժական պայմանները, ակնկալվող արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ **հրապարակումներում.**

1. Կարապետյան Ն.Զ. Սոցիալ-էկոլոգիական պատասխանատվությունն իբրև անձի արժեքային կողմնորոշումների մեթոդաբանական հիմք: Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները /միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես/, 1. (7), 2010թ., էջ 98-103:
2. Կարապետյան Ն.Զ. Բնաճանաչողական բնապահպանական գաղափարները Խ.Աբովյանի մանկավարժական երկերում: Խ.Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի ժողովածու, հ.1, 2010թ., էջ 49-50:
3. Կարապետյան Ն.Զ. էկոլոգիական արժեքների հիմնախնդրի վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումները: Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները /միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես/,3.(9), 2010թ., էջ 77-85:
4. Կարապետյան Ն.Զ. Բնության նկատմամբ սովորողների արժեքային վերաբերմունքի ձևավորման մանկավարժական տեխնոլոգիաները: Կրթությունը և գիտությունը Արցախում, 1-2, 2011թ., էջ 72-78:
5. Կարապետյան Ն.Զ. էկոլոգիական շարունակական կրթության գործընթացը որպես հասարակության էկոլոգիականացման գործոն: Գորիսի պետական համալսարանի միջազգային II գիտաժողովի աշխատանքների ժողովածու, 2011թ., էջ 607-612:
6. Կարապետյան Ն.Զ. էկոլոգիական կրթությունը որպես կայուն զարգացման կարևոր բաղադրիչ: Կրթությունը և գիտությունը Արցախում, թիվ 3-4, 2012թ., էջ 132-136:
7. Կարապետյան Ն.Զ. էկոլոգիական կրթության շարունակականությունը: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր: Նվիրվում է ՀՀ Անկախության 20-ամյակին, ԳՊՄԻ, 2012թ., էջ 309-394;
8. Կարապետյան Ն.Զ. Կոմպետենտ մոտեցումը որպես էկոլոգիական կոմպետենտության տեսական-մեթոդաբանական հիմք: /Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու/, 2013թ., էջ 339-342:

КАРАПЕТЯН НЕЛЛИ ЗАВЕНОВНА

ОСОБЕННОСТИ ЭКОЛОГИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ И ВОСПИТАНИЯ УЧАЩИХСЯ В ОСНОВНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13. 00.01-“Теория и история педагогики”

Защита диссертации состоится 4-ого декабря, 2014г., в 12^{00} часов на заседании специализированного совета “Педагогика” 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адрессу: 0010, Ереван, ул. Тигран Мец 17

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Сегодня модернизация процесса экологического образования и воспитания становится стратегической задачей для образовательной политики всех стран, в том числе и для Армении. В этом контексте становится необходимым решение интегративного, гармоничного соотношения передового опыта и современных педагогических парадигм, что является основой устойчивого развития и экологической образованности общества. В современных условиях развития общества особо подчеркивается необходимость осознания взаимоотношений «человек-биосфера» и разработки концепции экологического образования не только с социально-экологической, экономической, но и эконравственной точки зрения.

Отношение человека к природе, окружающей среде определяется уровнем экологической культуры, экологической компетентности и сформированности экологических ценностей личности. Преобладание общечеловеческих и национальных ценностей, современные тенденции развития образования требуют проектирования учебно-воспитательного процесса, соответствующего социальному строю общества и потребностям самосовершенствования личности. Такой подход предполагает изменение цели и ориентиров деятельности личности, экологизацию не только содержания образования, но и жизнедеятельности человека.

Проблема экологического образования и воспитания достаточно исследована, однако, в контексте концепции устойчивого развития общества необходимо выявить закономерности и особенности экологического образования и воспитания учащихся основной школы и разработать ее модель.

Цель исследования: выявить и теоретически обосновать закономерности и особенности экологического образования и воспитания учащихся основной школы и на их основе разработать педагогические условия формирования экологической компетентности, экологических ценностных ориентаций и умений противостоять стихийным бедствиям.

Задачи исследования:

1. Определить закономерности и особенности экологического образования и воспитания учащихся на основе анализа научной литературы и концептуальных методологических подходов.
2. Разработать анкеты и задания и, на основе полученных данных, анализировать существующее состояние сформированности мотивов экологической деятельности, ценностных ориентаций и экологических компетенций, определить уровни.
3. Выявить и обосновать педагогические условия формирования экологических ценностных ориентаций, экологических компетенций, умений противостоять стихийным бедствиям в процессе обучения предметам естественнонаучного цикла и обосновывать их эффективность.

4. Разработать педагогическую модель экологического образования и воспитания школьников и экспериментально обосновать ее эффективность.

Научная новизна исследования:

1. На основе анализа философской, психолого-педагогической и профессиональной литературы уточнены и конкретизированы понятия «экологические знания», «экологическое сознание», «экологическое мировоззрение», «экологическая культура». Интерпретированы и по-новому характеризованы понятия «экологическая ценность», «экологические ценностные ориентации», «экологическая компетентности».
2. Выявлены и обоснованы законамерности процесса экологического образования и воспитания учащихся основной школы.
3. Выявлены и обоснованы особенности экологического образования и воспитания учащихся основной школы:
   - многоаспектность,
   - переориентация образовательной системы к стратегии устойчивого развития,
   - мировоззренческий характер,
   - непрерывность экологического образования,
   - необходимость формирования ценностных ориентаций и экологической компетентности.
4. Обоснованы педагогические условия формирования экологических ценностных ориентаций, экологических компетенций, умений противостоять стихийным бедствиям, обеспечения эффективности экологического образования.
5. Разработана, теоретически обоснована и экспериментально апробирована педагогическая модель осуществления процесса экологического образования и воспитания учащихся основной школы, которая включает методологические подходы, дидактические принципы, формы педагогического взаимодействия, объективные и субъективные факторы, педагогические условия.

Теоретическая значимость исследования обусловлена обогащением современных научно-теоретических педагогических исследований в области экологического образования и воспитания, выявлением закономерностей и особенностей экологического образования и воспитания учащихся основной школы и обоснованием педагогических условий совершенствования этого процесса.

Практическая значимость исследования заключается разработак педагогической модели и комплекса педагогических условий экологического образования и воспитания учащихся основной школы, которая направлена на оказание практической помощи учителям, а также будет способствовать формированию экологически оправданного поведения учащихся, экологических ценностных ориентаций, экологической культуры и повышению эффективности учебного процесса.

Структура диссертации. Диссертация изложена на 156 страницах компьютерного текста, состоит из введения, трех глав, заключения, списка литературы.

KARAPETYAN NELLY ZAVENI

THE PECULIARITIES OF SECONDARY SCHOOLCHILDREN'S ECOLOGICAL EDUCATION AND UPBRINGING

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 ''Theory and history of Pedagogy''.

The defense of the dissertation will be held on the 4th of December, 2014 at 12:00 at the session of the Special Board of Pedagogy 020 HAC (Higher Attestation Commission) on awarding degrees under the Kh. Abovyan Armenian State Pedagogical University, address: Tigran Mets 17 Avenue, 0010 Yerevan.

SUMMARY

The relevance of investigation. Nowadays one of the educational priorities in all countries, including the Republic of Armenia, is to modernise the process of ecological education and upbringing.

The attitude of an individual towards the nature and natural environment is determined by his or her ecological culture, ecological competency and the level of the development of their ecological values. The superiority of global and national values and current trends of development of education make a demand for developing such processes of educational upbringing, which will meet the societal demands and the need for an individual's self-improvement and self-realisation. Such an approach presupposes critical changes in the purpose of an individual's activities and orientations, as well as an adaptation of the content of education and ways of life to ecological requirements in the society.

The purpose of investigation is to explore and theoretically formulate the peculiarities of ecological education and upbringing at secondary schools, and work out pedagogical conditions of the students' ecological competency, ecological value orientations and abilities to face disasters.

The following issues have been addressed in the research:

1. Based on the analysis of scientific literature, methodological and conceptual approaches in the area, explore the main peculiarities of secondary school students' ecological education and upbringing and the methodological basis for the development of ecological competency and ecological value orientations.
2. To develop questionnaires and tasks and based on the data analyse the conditions of the acquisition of ecological knowledge and motives for ecological activity, value orientations and the current level of the development of ecological competency, define levels and discuss teachers' attitude to that issue.
3. To find out and formulate pedagogical conditions of natural sciences in the process of teaching, analyse schoolchildren's ecological orientations, ecological competency and their abilities to face the natural disasters .
4. To elaborate and through research to formulate the effective pedagogical model for schoolchildren's ecological education and upbringing.

The scientific novelty of the research

1. The following concepts such as "ecological knowledge", "ecological understanding", "ecological outlook", "ecological culture", etc. have been analysed on the basis of philosophical, psycho-pedagogical and professional literature. Such terms as "ecological value", "ecological value orientation", "ecological competency" have been interpreted and newly defined, the necessity

of understanding the ecological competency of students at secondary school has also been formulated.

2. Based on several methodological approaches, some patterns and peculiarities of the ongoing process of ecological education and upbringing have been explored and discussed.
3. The following peculiarities of secondary schoolchildren's ecological education and upbringing have been explored and substantiated:
    - its multifacetedness
    - the fostering of a sustainable development of the system of education
    - its ability to develop worldviews
    - the continuity of ecological education
    - the necessity of developing ecological value orientations and ecological competences.
4. The pedagogical conditions of developing learners' ecological values, ecological competency and abilities to cope with disasters have been substantiated.
5. The pedagogical model of the realisation of ecological education and upbringing of schoolchildren at secondary school have been elaborated, theoretically formulated and verified through an experiment. This includes methodological approaches, didactic principles, forms of pedagogical influence, objective and subjective factors and pedagogical conditions.

The **theoretical** value of the research is conditioned by attempts at enriching the field of ecological education and upbringing with new scientific studies, explorations of new peculiarities and patterns in learners' ecological education and upbringing, and the substantiation of the pedagogical conditions of the improvement of that process.

The **practical** value of the research is that by means of the above mentioned elaborated model concerning the ecological education and upbringing of the secondary schoolchildren, the complex of pedagogical conditions will be of practical use for the teachers. It will also assist the development of the learners' ecological behavior, ecological value orientations, formulation of ecological culture and the enhancement of the efficiency of the teaching process.

The **structure** of dissertation: The paper consists of an introduction, three chapters, conclusions and a list of references.